


# Հաշմանդամների շահերի պաշտպանության և երիտասարդության զարգացման գիտաժողով

Հինգշաբթի, 25 հուլիսի, 2019թ. Ժամը 10:00-16:00 , AGBU գիտաժողովների սրահ, Մելիք-Աղամյան 2/2 Երևան 0010, Հայաստան



## Շահերի պաշտպանություն և ընտանիքների աջակցություն

Հրավիրված խոսնակները կներկայացնեն ամբողջ աշխարհում կիրառվող մի շարք մոդելներ, որոնք օգնում են հաշմանդամ երեխաներ կամ չափահասներ ունեցող ընտանիքներին: Կքննարկենք մեծ տարածում ունեցող մոդելների հիմնական ասպեկտները, ինչպես նաև յուրաքանչյուր մոդելի առավելություններն ու թերությունները: Կքննարկենք նաև ընտանիքի, համայնքի և կառավարության մակարդակով հաշմանդամների շահերի պաշտպանության և հաշմանդամության մասին իրազեկման կարևորությունը:



## Անկախությունն ու մեր երիտասարդության և համայնքի մեջ ներգրավվածությունը


Կքննարկվի հաշմանդամություն ունեցող անհատների անկախության բնույթը, ինչպես նաև վերջիններիս ներգրավվածությունը իրենց համայնքներում: Սույն դասախոսությունը նախատեսված է խնամակալներին և հենց անհատներին ապահովել ընդհանրացված ռազմավարություններով, որպեսզի նրանք կարողանան գնահատել իրենց շրջապատող միջավայրը՝ տանը, համայնքում և աշխատավայրում: Կվերանայենք խնամակալության հարաբերությունների բնույթը և կքննարկենք, թե ինչպես փոփոխել այս հարաբերությունները, որպեսզի վերջիններս ներառեն դասավանդման ազդեցիկ տարրեր: Այնուհետև կդիտարկենք մի շարք անհատների օրինակներ, ովքեր առավելագույնի են հասցրել իրենց անկախությունը, և վերջիններիս գրանցած արդյունքները:

## Նպատակ. Մտքերի փոխանակում և համագործակցություն

- Եթե Դուք համայնքի անդամ եք, հաշմանդամություն ունեցող անհատներին ծառայություն կամ ռեսուրսներ մատուցող կազմակերպություն կամ բաժին, Դուք կարող եք Ձեր մասին տեղեկատվությամբ սեղան ունենալ և ներկայացնել Ձեր գործունեությունը գիտաժողովի ժամանակ: Տարածք ամրագրելու համար խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (093)-80-70-60 (Ելենա Կիրակոսյան) կամ ուղարկելով նամակ հետևյալ էլ. հասցեին՝ [jermikankyun@gmail.com](mailto:jermikankyun@gmail.com):
- Հայ և ամերիկացի հրավիրված խոսնակները և հաշմանդամություն ունեցող անհատները կկիսվեն հաշմանդամների շահերի պաշտպանության վերաբերյալ իրենց դիտարկումներով և քննարկումներ կիրականցեն ամբողջ միջոցառման ընթացքում: Հաշմանդամություն ունեցող անհատների ու ընտանիքների մասնակցությունը խրախուսվում է:

## Անձի վրա հիմնված մտածողություն

Կիրականացվեն քննարկումներ, որոնք կվերաբերեն հաշմանդամություն ունեցող մարդուն. որպես անհատ դիտարկելու նշանակությանն ու կարևորությանը: Այս քննարկման բաժիններում առավելապես կկենտրոնանանք այն գործիքների վրա, որոնց միջոցով կարելի է հաղորդակցվել հաշմանդամություն ունեցող անհատների հետ՝ հիմնվելով այս մոտեցման, այս մարդկանց ինքնավարության կարևորության և կյանքում վերջիններիս ինքնադրսևորման ազդեցության վրա:



## Կայուն ընտանիքի պլանավորում և երիտասարդության զարգացում

Այս բաժնում մենք կքննարկենք հաշմանդամություն ունեցող անձանց և վերջիններիս ընտանիքների հետ անհատականացված պլանավորման և նպատակների ձևավորումը: Կքննարկենք, թե ինչու է կայուն և փաստաթղթավորված պլանավորումը ապագա խնամակալների և մատակարարների համար կարևոր՝ տեղեկատվություն ձեռք բերելու համար: Այս բաժնում կխոսենք նաև այն գործընթացների մասին, որոնք բացահայտում են, թե «ի՞նչ է անհրաժեշտ անհատին» և «ի՞նչ է անհրաժեշտ անհատի համար»: Կքննարկենք այս տեղեկատվության փոխանցման և կարիքների, ցանկությունների և նպատակների հիմնական սպասելիքների ընկալման ձևաչափերը, ինչը կնպաստի երկարաժամկետ առաջընթացին:

